ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/11Շ

ք. Երևան **«23» սեպտեմբերի 2019թ.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարին փոխարինող Հ. Բատիկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Կապալառու>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Աբաղյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքների (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 100 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 3 տարի: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 4):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Եթե պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 1 457 900 000 (մեկ միլիարդ չորս հարյուր հիսունյոթ միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 242 983 333 (երկու հարյուր քառասուներկու միլիոն ինը հարյուր ութսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Վճարումը կիրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում Կողմերի միջև համաձայնագիր կնքելու միջոցով:
Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[30] .

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ-ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

---

[30] *Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ,ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:*

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պատվիրատուն պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[32]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[33]

8.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները,

---

[32] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

[33] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով:*

դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տարածքայի կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3, ՀՀ կենտրոնական գանձապետարան ՀՎՀՀ 02578338 Հ/Հ 900011025823	<<Կապավոր>> ՍՊԸ ԼՂՀ Ստեփանակերտ, Աջափնյա 2 «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Հ/Հ 163008123412 ՀՎՀՀ 90003442
----------	----------
/ստորագրություն/ Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ

Հավելված թիվ 1
«23» սեպտեմբերի 2019թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/11Շ ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Մ-14, /Մ-4/ -Շորժա - Վարդենիս միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ60+300-կմ72+800 հատվածի հիմնանորոգման աշխատանքների

/ՀՀ հազ. դրամ/

ՀՀ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ.	Քանակը	Միավորի արժեքը*	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
	ՊԿ0+00-ՊԿ117+96				
I.	**Հողային աշխատանքներ**				
1	III6վ գրունտի մշակում և տեղափոխում բուլդոզերով 50մ լիցք	մ³	6810	0.497	3 384.570
2	III6վ գրունտի մշակում և բարձում էքսկավատորով (0.65մ³), տեղափոխում լիցք 1.0կմ	մ³	1780	1.394	2 481.320
3	III6վ գրունտի մշակում և բարձում էքսկավատորով (0.65մ³), տեղափոխում լցակույտ 3.0կմ	մ³	26290	1.688	44 377.520
4	Կողային առուների ակոսահանում մեխանիզմով	մ³	11340	2.518	28 554.120
5	Լիցքի խտացում պնևմոգլդոնով մեկ հետքով 6 անցումով 30սմ շերտի հաստությամբ, ջրի տարածումով	մ³	8610	0.726	6 250.860
6	Դարակների իրականացում III6վ գրունտներում	մ³	576	2.994	1 724.544
				1.Ընդամենը	**86 772.934**
II.	**Ճանապարհային պատվածք**				
	I տիպ				
1	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ²	95263	0.571	54 395.173
2	Գոյություն ունեցող ա/բետոնե պատվածքի վերօգտագործում սառը վերամշակման եղանակով հմիջ.=20սմ, ցեմենտի ավելացումով 1մ²-16կգ	մ²	58293	2.849	166 076.757
3	Տաք, ծակոտկեն, խոշորահատիկ ա/բետոն h=6սմ	մ²	58531	6.151	360 024.181
4	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=4սմ	մ²	58531	4.566	267 252.546
	II տիպ				0.000
1	Ավազակոպճային շերտ h=20սմ	մ²	45600	1.142	52 075.200
2	Սառը վերամշակում երթևեկելի մասի լայնությամբ հմիջ.=20սմ, ցեմենտի ավելացումով 1մ²-16կգ	մ²	28104	2.849	80 068.296
3	Տաք, ծակոտկեն, խոշորահատիկ ա/բետոն h=6սմ	մ²	28104	6.151	172 867.704
4	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=4սմ	մ²	28104	4.566	128 322.864
				2.Ընդամենը	**1 281 082.721**
III.	**Կողնակներ**				
1	Կողնակների ամրացում կոպճային	մ²	45545	0.669	30 469.605

	խառնուրդով h=10սմ				
				3.Ընդամենը	**30 469.605**
IV.	**Ուղիներ**				
1	Ավազակոպճային շերտ խողովակների տակ h=10սմ	մ³	3.3	6.030	19.899
2	Մետաղական խողովակների տեղադրում d=325.մմ; 1գծ.մ=39.5կգ; δ=5մմ	գծ.մ	119.5	29.945	3 578.428
3	Գլխադիրների միաձույլ բետոն B15	մ³	6.75	110.548	746.199
4	Խողովակի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	121.90	1.813	221.005
5	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ²	1928	0.544	1 048.832
6	Չափազատված խիճ h=12սմ բիտումի տարածումով, 4.12տ/1000մ²	մ²	1848	3.196	5 906.208
7	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=5սմ	մ²	1803	5.570	10 042.710
				4.Ընդամենը	**21 563.280**
V.	**Մուտքեր**				
1	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ²	102	0.544	55.488
2	Չափազատված խիճ h=12սմ բիտումի տարածումով, 4.12տ/1000մ²	մ²	102	3.196	325.992
3	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=4սմ	մ²	102	4.514	460.428
				5.Ընդամենը	**841.908**
VI.	**Ջրթող խողովակների մաքրում և վերականգնում**				
1	Տարբեր բացվածքներով խողովակների մաքրում ձեռքով/10հատ/, բարձում և տեղափոխում լցակույտ 3.0կմ	հատ	10	70.500	705.000
2	d=1.0ե/բ խողովակի գլխադիրների սվաղում ավազացեմենտե շաղախով	մ²	32	1.966	62.912
3	ՊԿ92+80 d=1.0մ ե/բ խողովակի ապատեղակայում, նորից տեղակայում (N13 օղակ)	հատ	1	37.800	37.800
.	Օղակի հիմնատակի միաձույլ բետոն B12.5	մ³	0.45	61.333	27.600
.	Գլխադիրների միաձույլ բետոն B15	հատ	2	284.650	569.300
.	Վաքի միաձույլ բետոն B12.5	հատ	2	97.150	194.300
4	ՊԿ114+39 d=1.0մ ե/բ խողովակի տեղաշարժված օղակի ապատեղակայում, նորից տեղակայում (N13 օղակ)	հատ	1	37.800	37.800
.	Օղակի հիմնատակի միաձույլ բետոն B12.5	մ³	0.45	61.333	27.600
.	Գլխադիրների միաձույլ բետոն B15	հատ	2	284.650	569.300
.	Վաքի միաձույլ բետոն B12.5	հատ	2	97.150	194.300
5	d=0.75մ ե/բ խողովակի թևերի վերականգնում միաձույլ բետոնով B12.5	հատ	4.0	15.900	63.600
6	Նույնը d=1.0մ ե/բ խողովակի համար	հատ	2	19.100	38.200
7	Նույնը 2x1.5մ ե/բ խողովակի համար	հատ	2	38.150	76.300
8	ՊԿ115+58 2x1.5մ ե/բ խողովակի ելքում հիմքի ամրացում միաձույլ բետոնով B15	մ³	4.86	80.761	392.498
.	Գլխադիրի իրականացում միաձույլ բետոնով B15	հատ	1	497.500	497.500
.	Վաքի և ատամի իրականացում երկու կողմից միաձույլ բետոնով B12.5	հատ	2.0	289.100	578.200

.	Քարային ամրացում h=0.8մ ավազակոպճային շերտ h=10սմ	մ^2	35.0	5.080	177.800
9	d=0.75մ ե/բ խողովակի վաքերի իրականացում միաձույլ բետոնով B12.5	հատ	3.0	77.100	231.300
10	Նույնը d=1.0մ ե/բ խողովակի համար	հատ	10.0	97.130	971.300
11	Նույնը d=1.5մ ե/բ խողովակի համար/2 հատ/	հատ	2.0	185.000	370.000
				6.Ընդամենը	**5 822.610**
VII.	**Գոյություն ունեցող կամրուրջների նորոգում**				
Ա.	**ՊԿ3+30; L=5.8մ**				
1	Կամրջի չորս անկյուններում մայթի եզրերում լիցքի իրականացում տոփանումով	մ^3	5.0	2.100	10.500
2	Մայթի բլոկների տակ թևերի բարձրացում միաձույլ բետոնով B15	մ^3	0.3	67.333	20.200
3	Նոր մետաղական բազրիքների տեղակայում մայթի բլոկների ներդիրների վրա ներկումով	տոն	0.247	749.490	185.124
4	Անվահրիչների սվաղում և ներկում	մ^2	14.0	3.007	42.098
Բ.	**ՊԿ8+81; L=6.5մ**				
1	Կամրջի չորս անկյուններում մայթի եզրերում լիցքի իրականացում տոփանումով	մ^3	7.0	2.100	14.700
2	Մայթի բլոկների տակ թևերի բարձրացում միաձույլ բետոնով B15	մ^3	0.5	67.333	33.667
3	Նոր մետաղական բազրիքների տեղակայում մայթի բլոկների ներդիրների վրա ներկումով	տոն	0.247	749.490	185.124
4	Անվահրիչների սվաղում և ներկում	մ^2	14.0	3.007	42.098
5	Կամրջի երկու կողմի մեկական մայթի բլոկների ապատեղակայում և տեղակայում-2 հատ	հատ	2.0	24.000	48.000
6	Ապատեղակայված բլոկների տակ հեծանների կոտրտված մասերի վերականգնում միաձույլ բետոնով B15	մ^3	1.5	73.600	110.400
Գ.	**ՊԿ24+88; L=3.0մ**				
1	Կամրջի չորս անկյուններում մայթի եզրերում լիցքի իրականացում տոփանումով	մ^3	5.0	2.100	10.500
2	Բետոնե եզրապատեր կամրջի երկու կողմերում B20 (0.4x0.6x4)x2	մ^3	1.92	121.458	233.199
3	Անվահրիչների սվաղում և ներկում	մ^2	13.8	3.007	41.497
4	Կամրջի քանդված թևի վերականգնում միաձույլ բետոնով B15	մ^3	1.2	67.25	80.700
5	Բերվածքների մաքրում ձեռքով, բարձում, տեղափոխում լցակույտ 3.0կմ	մ^3	4.0	8.00	32.000
Գ.	**ՊԿ28+39; L=18.0մ**				
1	Կամրջի չորս անկյուններում մայթի եզրերում լիցքի իրականացում տոփանումով	մ^3	5.0	2.100	10.500
2	Գոյություն ունեցող անվահրիչների սվաղում և ներկում	մ^2	41.4	3.007	124.490
3	Բազրիքների ներկում /36գծ.մ/	տոն	0.6	10.333	6.200
				7.Ընդամենը	**1 230.996**
VIII.	**Մետաղական խողովակներ d=1020մմ (14 հատ)**				
1	III6վ գրունտի մշակում և բարձում էքսկավատորով (0.65մ^3), տեղափոխում լցակույտ 3.0կմ	մ^3	1493.0	1.688	2 520.184

2	Նույնը տեղում կուտակումով հետադարձ լիցքի համար	մ³	841.0	0.533	448.253
3	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ³	31.2	6.04	188.508
4	Մետաղական խողովակների տեղադրում d=1020մմ; 1գծ.մ=249կգ; δ=10մմ	գծ.մ	215.4	182.435	39 287.377
5	Խողովակի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	689.9	1.813	1 250.789
6	Գլխադիրի միաձույլ բետոն B15	մ³	78.7	110.544	8 697.602
7	Գլխադիրի թևերի միաձույլ բետոն B12.5	մ³	30.2	63.519	1 920.815
8	Գլխադիրի ջրամեկուսացում	մ²	152.9	1.233	188.501
9	Վաքի միաձույլ բետոն B12.5	մ³	13.3	77.265	1 025.307
10	Ատամի միաձույլ բետոն B12.5	մ³	22.1	77.265	1 709.102
11	Հետադարձ լիցք	մ³	841.0	0.105	88.305
				8.Ընդամենը	**57 324.742**
IX.	**Մետաղական խողովակներ d=720մմ(7 հատ)**				
1	III6վ գրունտի մշակում և բարձում էքսկավատորով (0.65մ3), տեղափոխում լցակույտ 3.0կմ	մ³	199.0	1.688	335.912
2	Նույնը տեղում կուտակումով հետադարձ լիցքի համար	մ³	157.0	0.533	83.681
3	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ³	8.51	6.040	51.400
4	Մետաղական խողովակների տեղադրում d=720.մմ; 1գծ.մ=141կգ; δ=8մմ	գծ.մ	78.84	103.435	8 154.815
5	Գլխադիրի միաձույլ բետոն B15	մ³	16.2	110.544	1 790.813
6	Խողովակի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	178.23	1.813	323.131
7	Գլխադիրի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	47.7	1.233	58.814
8	Հետադարձ լիցք	մ³	157.0	0.105	16.485
				9.Ընդամենը	**10 815.052**
X.	**Ճանապարհի կահավորում**				
Ա.	**Ճանապարհային նշաններ**				
	Նախազգուշացնող	հատ	18	48.375	870.750
	Առավելության	հատ	60	53.050	3 183.000
	Արգելող	հատ	2	53.050	106.100
	Թելադրող	հատ	2	53.050	106.100
	Տեղեկատու ցուցիչ	հատ	16	34.669	554.704
	Սպասարկման	հատ	2	53.050	106.100
	Լրացուցիչ տեղեկատու	հատ	2	37.150	74.300
Բ.	**Արգելափակոցներ**				
.	Մետաղական արգելափակոցների տեղադրում մետաղական սյուներով(սյուների քանակը -478հատ, վերջնական տարր - 34հատ/340կգ; անկյունագծային կապ204հատ/1088.9կգ ,պողպատե թիթեղ d =4մմ)	գծ.մ	1401	22.267	31 196.067
	ավազակոպիճ	մ³	15.5	3.352	51.956
.	Գոյություն ունեցող մետաղական արգելափակոցների ապատեղակայում(բետոնե սյուներով)	գծ.մ	96	2.514	241.344
.	C1 տիպի պլաստիկ ազդանշանային սյուների տեղադրում	հատ	1141	5.901	6 733.041

Գ.	**Երթևեկելի մասի նշագծում , լուսանդրադարձիչ գնդիկների օգտագործմաբ 0.35կգ-1մ²**				
	1.1	կմ	2.4	142.042	340.901
	1.5	կմ	8.396	62.208	522.298
	1.6	կմ	0.85	115.412	98.100
	1.8	կմ	0.465	88.817	41.300
	1.2.1	կմ	23.892	248.456	5 936.111
				10.Ընդամենը	**50 162.172**
	ՊԿ0+00-ՊԿ-7+04				
XI.	**Ճանապարհային պատվածք**				
1	Ավազակոպճային շերտի իրականացում լայնացված մասերում h=20սմ	մ²	570	1.142	650.940
2	Սառը վերամշակում երթևեկելի մասի լայնությամբ հմիջ.=20սմ, ցեմենտի ավելացումով 1մ²-16կգ	մ²	4997	2.849	14 236.453
3	Տաք, ծակոտկեն, խոշորահատիկ ա/բետոն h=6սմ	մ²	4997	6.151	30 736.547
4	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=4սմ	մ²	4997	4.566	22 816.302
				11.Ընդամենը	**68 440.242**
XII.	**Կողնակներ**				
1	Կողնակների մաքրում խոտածածկից(h=10սմ) բուլդոզերով, տեղափոխում 50մ կուտակումով, բարձում էքսկավատորով(0.65մ³), տեղափոխում լցակույտ 3.0կմ	մ³	295.7	1.480	437.636
2	III6վ գրունտի մշակում և բարձում էքսկավատորով (0.65մ³), տեղափոխում լցակույտից 3.0կմ-ից կողնակների իրականացման համար	մ³	291.5	1.630	475.145
3	Կողնակների հարթեցում և խտացում պնևմոգլդոնով 1 հետքով 4 անցումով h=10սմ շերտի հաստությամբ, ջրի տարածումով	մ²	2915	0.091	265.265
4	Կողնակների ամրացում կոպճային խառնուրդով h=10սմ	մ²	2915	0.669	1 950.135
				12.Ընդամենը	**3 128.181**
XIII.	**Գոյություն ունեցող կամրջի նորոգում ՊԿ2+52; L=10մ**				
1	Կամրջի չորս անկյուններում մայթի եզրերում լիցքի իրականացում տոփանումով	մ³	8.0	2.100	16.800
2	Մայթի քանդված բլոկի վերականգնում միաձույլ բետոնով B25	մ³	0.7	89.714	62.800
3	Նոր մետաղական բազրիքների տեղակայում մայթի բլոկների ներդիրների վրա ներկումով	տոն	0.4748	749.490	355.858
4	Անվահրիչների սվաղում և ներկում	մ²	28.8	3.007	86.602
5	Մայթի բլոկների հարթեցում միաձույլ բետոնով բետոնով h=5սմ B20	մ²	27.0	3.096	83.592
6	Ա/բ շերտի քանդում, բարձում ձեռքով, տեղափոխում լցակույտ 3,0կմ h=7սմ	մ²	60.0	0.572	34.320
7	Կամրջի վրայի գրունտի մաքրում ձեռքով, բարձում, տեղափոխում լցակույտ 3.0կմ	մ³	6.0	8.000	48.000
8	Մանրահատիկ ա/բ h=4+3սմ	մ²	115	7.971	916.665
				13.Ընդամենը	**1 604.636**

XIV.	**Ճանապարհի կահավորում**				
Ա.	**Արգելափակոցներ**				
.	C1 տիպի պլաստիկ ազդանշանային սյուների տեղադրում	հատ	70	5.901	413.070
Բ.	**Երթևեկելի մասի նշագծում , լուսանդրադարձիչ գնդիկների օգտագործմաբ 0.35կգ-1մ²**				
	1.5	կմ	0.704	62.208	43.794
	1.2.1	կմ	0.704	248.456	174.913
				14.Ընդամենը	**631.777**
				Ընդհանուրը	**1 619 890.857**

*Միավորի գինը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը» ՝ 11% և ԱԱՀ-ն՝ 20%

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքայի կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
Հ/Հ 900011025823

/ստորագրություն/
Կ.Տ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

<<Կապավոր>> ՍՊԸ
ԼՂՀ Ստեփանակերտ, Աջափնյա 2
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163008123412
ՀՎՀՀ 90003442

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 2
«23» սեպտեմբերի 2019թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/11Շ ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Մ-14, /Մ-4/ -Շորժա - Վարդենիս միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ60+300-կմ72+800 հատվածի հիմնանորոգման աշխատանքների կատարման

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		սկիզբը	ավարտը
0	Լաբորատոր փորձարկումներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 100 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
1	Հողային աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 50 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
2	Ճանապարհային պատվածք	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 90 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
3	Կողնակներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 90 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
4	Ուղիներ և մուտքեր	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 95 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
5	Խողովակներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 55 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
6	Գոյություն ունեցող կամուրջներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 65 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
7	Անվտանգության էլեմենտներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 100 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ		**Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո**	**Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 100 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքայի կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
Հ/Հ 900011025823

/ստորագրություն/
Կ.Տ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
<<Կապավոր>> ՍՊԸ
ԼՂՀ Ստեփանակերտ, Աջափնյա 2
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163008123412
ՀՎՀՀ 90003442

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 4
«23» սեպտեմբերի 2019թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/11Շ ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«23» սեպտեմբեր 2019թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/11Շ ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 1

23.09.2019թ. կնքված N ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/11Շ պետական գնման պայմանագրի

ք. Երևան **<< 16 >> հոկտեմբերի 2019թ.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարին փոխարինող Հ. Բատիկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Կապավոր>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Աբաղյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, ՀՀ կառավարության 2019թ. հոկտեմբերի 03-ի թիվ 1331-Ն և 1209-Ա որոշումների և հիմք ընդունելով Կողմերի միջև 23.09.2019թ. կնքված N ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/11Շ պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին.

1.1 Հաստատել Համաձայնագրի 2019թ. Վճարման Ժամանակացույցը համաձայն հավելված 1-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	«Կապավոր» ՍՊԸ
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,	ԼՂՀ Ստեփանակերտ, Աջափնյա 2
ՀՀ կենտրոնական գանձապետարան	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՎՀՀ 02578338	ՀՎՀՀ 90003442
ՀՀ 900011025823	ՀՀ 163008123412
/ստորագրություն/	/ստորագրություն/

Հաստատված է
N ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/11Շ գնման պայմանագրի
«16» հոկտեմբերի 2019թ. կնքված
Թիվ 2 Համաձայնագրով
Հավելված թիվ 1

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Մ-14, /Մ-4/ -Շորժա - Վարդենիս միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ60+300-կմ72+800 հատվածի հիմնանորոգման աշխատանքների

(ՀՀ դրամ)

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Գնման ենթակա աշխատանքների անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1	45231177/75	Մ-14, /Մ-4/ -Շորժա - Վարդենիս միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ60+300-կմ72+800 հատվածի հիմնանորոգման աշխատանքների										1 457 900 000	1 457 900 000	1 457 900 000	**1 457 900 000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
ՀՀ 900011025823

/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ
«Կապավոր» ՍՊԸ
ԼՂՀ Ստեփանակերտ, Աջափնյա 2
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՎՀՀ 90003442
ՀՀ 163008123412

/ստորագրություն/